# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՐԱ ՔԱՌՅԱՆ

2018 թ. հայաստանյան թավշյա հեղափոխությունը վերականգնեց վստահությունը իշխանության որոշ մարմինների, մասնավորապես՝ կառավարության նկատմամբ: Վերականգնված վստահությունը առաջացրեց դրական սպասումներ ու ակնկալիքներ, մասնավորապես՝ տնտեսական և սոցիալական ոլորտում, որն առայժմ տեսանելի չէ տնտեսական կարևոր ցուցիչների և մարդկանց կենսամակարդակի առումով: Հանուն արդարության նշենք, որ այն չէր կարող տեսանելի դառնալ կարճ ժամանակահատվածում:

Տնտեսական ինքնիշխանության խնդիրը կարևորվում է այն պարզ պատճառով, որ նախորդ իշխանությունները խարխլել էին երկրի քաղաքական և տնտեսական ինքնիշխանությունը, որի վերականգնումը, քաղաքական կամքի դրսևորումից բացի, պահանջում է հաղթահարման առանցքային հիմնավոր մոտեցումներ և ժամանակ:

Անդրադառնալով խաթարված և հիմքից խարխլված տնտեսական ինքնիշխանության հիմնախնդրին, ներկա իրավիճակում ժողովրդի կառավարության կողմից այդ ժառանգությունից ձերբազատվելու փորձին և դրա հաղթահարման ուղիներին՝ հարկ ենք համարում շեշտել, որ «տնտեսական ինքնիշխանությունը ոչ թե տնտեսական ոլորտի ինքնիշխանությունն է, այլ տնտեսական ինքնիշխանության բովանդակությունը»[1]: Նշված խնդիրը օբյեկտիվորեն գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել և վեր հանել խնդրի առանձին բաղադրիչներն ու գործոնները:

Հարկ է նշել, որ ժողովրդի կառավարությունը միանգամից պայքարի նպատակ թիրախավորեց տնտեսական ինքնիշխանության հետևյալ խոցերը՝ կոռուպցիան, կլիենտելիզմը՝ բիզնես վարելու հովանավորչությունը (կամ «տանիքների» դեմ պայքարը) և մենաշնորհները: Հավելենք նաև, որ ժողովրդի կառավարության տեսադաշտից դուրս մնացին ինքնիշխանության որոշ կարևոր դրսևորումներ, մասնավորապես՝ բնական մենաշնորհ ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարման ոլորտում պետությունից զավթված բաշխման գործառույթները, այն է՝ ծառայություններ ստացողների սուբսիդավորման չհիմնավորված պատվիրակումները այդ իսկ ոլորտի բիզնես վա-

[1] **Блищенко И. П., Дориа Ж**. Экономический суверенитет государства. Учебное пособие. М., 2000, с. 23 // http://window.edu.ru/catalog/pdf2txt/909/64909/35990?p_page=3

րողներին: Հանրության շրջանում ամենալայն քննարկման և ուսումնասիրության առարկա դարձած բնական գազի և էլեկտրաէներգիայի չհիմնավորված բարձր սակագների հարցը մի խնդիր է, իսկ բնական մենաշնորհների ոլորտում պետությունից զավթված՝ սուբսիդավորման գործառույթի հարցը՝ մեկ այլ՝ չնայած դրանց սերտ կապին:

Կոռուպցիայի դեմ իրական պայքարը պահանջում է քաղաքական կամքի դրսևորում, որի ականատեսը մենք վերջապես եղանք: Մինչդեռ կոռուպցիան ամենամեծ ցանկության դեպքում մի օրում կամ անգամ մի քանի տարիների ընթացքում հնարավոր չէ վերացնել. դրա վկայությունը Չինաստանում կոռուպցիայի դեմ իրականացվող կոշտ պայքարն է[2]: Բանն այն է, որ կոռուպցիոն հանցավորությունը զոհ կամ տուժող կողմ չունի, դրանում ներգրավված կողմերը այդ հակահասարակական գործարքից միայն շահում են, իսկ կոռուպցիայից տուժողը հասարակությունն է: Դա է պատճառը, որ կոռուպցիոն հանցագործությունները բացահայտելը շատ բարդ է, և կոնկրետ մեղադրանքներ ներկայացնել դրանում ներգրավված անձանց փաստացի չափազանց դժվար է: Վերջապես կոռուպցիայի «բարձրագույն» ձևը՝ հանցավոր զարտուղի մեխանիզմների ամրագրումն օրենսդրության մեջ, որի պարագայում ոչ ոք ոչինչ չի խախտում, ամեն ինչ կատարվում է օրենսդրության ֆորմալ տառը պահպանելով, սակայն խախտված են լինում հանրային կյանքի, այդ թվում բիզնեսի ողջամիտ սկզբունքները, չափորոշիչներն ու մոտեցումները: Իրատես լինելու համար հարկ է նշել, որ ժողովրդի կառավարությունը առայժմ չունի բավարար ռեսուրս և ժամանակ, որպեսզի բացահայտվեն այդպես հմուտ մշակված հանցավորության կառուցակարգերը: Վարչապետ Փաշինյանի կառավարությունը անցած ժամանակահատվածում բացահայտել է օրինազանցության և կաշառակերության բազմաթիվ աղաղակող փաստեր, սակայն կոռուպցիոն հնարամիտ և մասշտաբային սխեմաները մեծ մասամբ դեռևս գործում են «ապահով» ստվերում: Կոռուպցիայի դեմ պայքարի բարդությունն ըմբռնելու համար հարկ է նկատել.

«-Ինչպես կապիտալն է իր էությամբ ունակ հոսելու առավել եկամտաբեր ոլորտներ, այնպես էլ պետական իշխանական լիազորությունների զավթումը՝ կոռուպցիայի առավել վտանգավոր դրսևորումը, առաջին հերթին կատարվում է այն ոլորտներում, որտեղից հնարավոր է ստանալ առավելագույն արդյունք՝ անօրինական տնտեսական ռենտայի տեսքով:

- Կոռուպցիոն միջավայրում բարոյազրկվում ու կապիտուլյացիայի է ենթարկվում հասարակության մեծամասնության հենարանն ունեցող՝ երկրի դիմագիծը բնութագրող քաղաքական էլիտան, և փոխարենը ձևավորվում է կեղծ քաղաքական «էլիտա», որը, սակայն, չի կարող

[2] Տե՛ս «Как Китай поступает с олигархами, ворами и коррупционерами, бежавшими на Запад?» // http://xn----8sbeybxdibygm.ru-an.info

ունենալ իրական ժողովրդավարական հենարան և հիմնվում է կոռումպացված իշխանական համակարգի վրա: Կոռուպցիան ի զորու է որակազրկելու հանրային կյանքի ժողովրդավարության ձևաչափն ու կառուցակարգերը»[3]:

Ըստ այսմ՝ վարչապետ Փաշինյանի կողմից սեղմ ժամկետում՝ 2018 թ. դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման նպատակը անօրինական ձևավորված պսևդոքաղաքական «էլիտան» և իրական ժողովրդավարական հենարան չունեցող օրենսդիր իշխանության հեռացումն էր:

Բիզնես վարելու համար հովանավորչության կամ «տանիքների» անհրաժեշտությունը (կլիենտելիզմը՝ հովանավորչություն իր տարատեսակներով՝ նեպոտիզմ, քրոնիզմ, ֆավորիտիզմ, պատրոնաժ) ժողովրդի կառավարությունը թիրախավորեց միանգամից, և խնդիրը կարելի է համարել սկզբունքային առումով լուծված: Այն որպես երևույթ այլևս կոշտ ճնշման տակ է, թեև բիզնեսի ոլորտում այն որպես վերացված իրողություն գնահատելու համար հոգեբանական առումով ժամանակ է պահանջելու:

ՀՀ տնտեսության առավել խոցելի խնդիրը՝ տնտեսության մենաշնորհային և օլիգոպոլ վիճակի դեմ պայքարը, նույնպես կառավարության թիրախներից է: Տարիների ընթացքում ձևավորված մենաշնորհները ունեն կայուն կազմավորված կառուցակարգեր, որոնց կազմալուծումը բավականին բարդ է: Ներկրող և անգամ արտահանող մենաշնորհները ունեն մրցակցային դիրքերը ամուր պահելու ձևավորված ենթակառուցվածքներ, մասշտաբի էֆեկտը դրսևորելու հնարավորություն, ապրանքների և ծառայությունների տեղաշարժի գործունակ և հաստատուն խողովակներ, գնային մրցակցության պայքարի արդյունավետ գործիքակազմ, ներառյալ՝ գնային դեմպինգը, մենաշնորհային ապրանքների միաժամանակ ներմուծելու և արտադրելու փաստացի հնարավորությունը: Որևէ սկսնակ կամ անգամ արհեստավարժ գործարար մենաշնորհային ոլորտի դաշտ մտնելուց առաջ երկար կգնահատի նման գործոնների դեմ մրցակցելու իր հնարավորությունները, որոնք իրականում կլինեն խիստ սահմանափակ: Հետևապես կազմավորված մենաշնորհների դեմ պայքարը ենթադրում է համալիր միջոցառումների իրականացում և վաղ է հայտարարել դրանց նկատմամբ հաղթանակի մասին:

Ստորև անդրադառնանք պետությունից ուզուրպացված (կամ զավթված) բնական մենաշնորհների ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարման ոլորտում ծառայություններ ստացողների սուբսիդավորման պատվիրակմանը՝ այդ իսկ ոլորտի բիզնես վարողներին: Այդ երևույթի վտանգավորության աստիճանը

[3] **Արա Քառյան**, Կոռուպցիա (բացատրական ձեռնարկ), Եր., «Գասպրինտ», 2005, էջ 5:

մինչ օրս մնում է հանրության շրջանում լիարժեք չգնահատված: Երևույթի կնքահայրը վարչապետ Կ. Կարապետյանն էր, որը 2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գազի և էլեկտրաէներգիայի սակագների հայտարարված իջեցման պատրվակով «Գազպրոմ-Արմենիա» և «ՀԷՑ» ընկերություններին, ըստ էության, պատվիրակեց անապահով որոշ խմբի սպառողներին և բիզնեսի առանձին խմբերին բնական գազի և էլեկտրաէներգիայի արտոնյալ ցածր սակագներով մատակարարումը: Այն տնտեսական բովանդակության առումով նշանակում է բնաիրային տեսքով սուբսիդավորում: Ընդ որում, սուբսիդավորումը այդ ընկերությունները իրականացնում են ոչ թե իրենց շահույթները նվազեցնելով, այլ մնացած բոլոր սպառողների հաշվին: Իրականում դա պետության կողմից չստացված հարկն է, որն այնուհետև պետք է պետական բյուջեի խողովակով սուբսիդավորվեր նշված շահառուներին, ընդ որում, ոչ թե բնաիրային, այլ դրամական տեսքով: Այդ գործառույթի պատվիրակման նպատակը մեկն էր՝ հեռու պահել իշխանություններին, ի դեմս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ), այդ երկու կառույցների գնագոյացման խոհանոցից, քանի որ նրանք ստանձնել են կեղծ բարեգործական առաքելություն: Իրականում էներգակիրների՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագների իջեցումը առանձին շահառուների համար ուղղորդված էր կլանային շահերի առանցքով:

Հարկ է նշել, որ վարչապետ Փաշինյանը կառավարության անդամներին նպատակադրում է խիստ կարևոր խնդիրների լուծմանը, մինչդեռ արդյունքները միշտ չէ, որ մոտենում են սպասումներին: Այսպես, 2018 թ. հունիսի 8-ին ՀՀ կառավարության նիստում Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար Ա. Գրիգորյանը, ի պատասխան վարչապետի նախկինում տված հանձնարարականի՝ գազի և էլեկտրաէներգիայի սակագնի հետ կապված, նշեց, որ էլեկտրաէներգիայի սակագինը 10 դրամով կնվազի միայն սոցիալապես անապահով ընտանիքների համար, որոնց թիվը կազմում է 110-120 հազար: Բացի այդ, շեշտեց, որ «Տաշիր» (ՀԷՑ-ի սեփականատեր) ընկերության հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որպեսզի նրանք իրենց շահույթի հաշվին դա անեն[4]: Հարկ է շեշտել, որ հանրային կարևոր խնդրի այդ չակերտավոր լուծումը իրականում ընթանում էր նախորդ իշխանության նախանշած վտանգավոր կոռուպցիոն սխեմայի շրջանակում: Դրանով նախորդ իշխանությունները քողարկում էին կոռուպցիոն շղթան և, դրա հետ մեկտեղ, հանձնում էին ՀՀ տնտեսական ինքնիշխանությունը՝ ելնելով բարձրագույն ղեկավարության անձնական պրագմատիկ շահերից:

Մեզանում տարիներ շարունակ քննարկվող գազի և էլեկտրաէ-

[4] Տե՛ս «Էլեկտրաէներգիան կէժանանա միայն անապահով ընտանիքների համար» // https://www.lragir.am/2018/06/08/178211/

ներգիայի սակագինը նվազեցնելու հարցը սկզբունքորեն հանգում է սակագների նվազեցման հնարավորությանը (որի քննարկումը սույն հարցադրումների բուն խնդիրը չէ): Հարկ է շեշտել, որ սակագների իջեցումը ստեղծում է նաև երկրորդ աննախադեպ հնարավորությունը, այն է՝ հարկային համակարգում էկոլոգիական հարկերի դոկտրինի ներմուծումը, որը հարկային և ավելի լայն տնտեսական քաղաքականության մեջ դնում է բոլորովին նոր որակի խնդիրներ և լուծումներ՝ այդ թվում նաև լուծելով սոցիալապես անապահով խավերի անձանց և բիզնեսի որոշ թիրախային ոլորտների համար առավել հասցեական աջակցության խնդիրը:

Հարկային համակարգի էկոլոգացման ու դրա առաջին կարևոր քայլի՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ներմուծման դեպքում, կառավարությունը որպես նպատակադրում կարող է հռչակել հարկային քաղաքականության փիլիսոփայության փոփոխությունը, որով առաջին հերթին կվերականգնվի տնտեսական ինքնիշխանությունը, կապահովվի այդքան անհրաժեշտ հարկային եկամուտների կտրուկ բարձրացումը, միաժամանակ կարող է լուծում տրվել երկար ժամանակ խնդրահարույց դարձած մի շարք խնդիրների՝ մաքսային սահմանի վրա ԱԱՀ գանձման պրակտիկային, ԱԱՀ դրույքաչափի նվազեցմանը, եկամատահարկի պրոգրեսիվ դրույքաչափից հրաժարմանը (թվարկումը կարելի է շարունակել) և բյուջետային նպատակային սուբսիդավորման միջոցով լուծել նաև սոցիալական նշանակության առաջնահերթ խնդիրներ:

Իրական քայլ կատարելով հարկային համակարգի էկոլոգացման ուղղությամբ՝ ՀՀ կառավարությունը հիմնավոր հայտ կարող է ներկայացնել դոնոր վարկավորող երկրներին՝ պետական արտաքին պարտքի կրճատման խնդրով՝ «պարտք բնապահպանության դիմաց» (Debt-for-Environment Swaps (DFES)) ձևաչափով, որը ներկայումս այդ խնդրի լուծման առավել արդյունավետ գործիքն է[5]:

Բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ներմուծման ընդդիմախոսները առաջնահերթ բարձրաձայնում են գների աճի վտանգի մասին: Իրականում դա խաբկանք ու մոլորեցնող էժանագին քայլ է: Խնդիրն այն է, որ էներգակիրների ակցիզի ներմուծումը չի բարձրացնի սպառողների կողմից սպառված գազի և էլեկտրաէներգիայի վճարումները, քանի որ գործադրվում է «զրոյական միասնական սակագնի» ալգորիթմը, այն է՝ սակագին գումարած ակցիզային հարկ ձևաչափը չի գերազանցելու սպառողի սակագնի վճարը (սպառողը կվճարի նույն գումարը): Մինչդեռ պետության և տնտեսության համար կստեղծվեն բոլորովին այլ իրավիճակ ու հնարավորություններ:

Առաջարկվող լուծումը հնարավորություն կընձեռի ապահովելու.

[5] Տե՛ս «Lessons Learnt from Experience with Debt-for-Environment Swaps in Economies in Transition», OECD, 2007, էջ 16 // https://www.oecd.org/environment/outreach/ 39352290.pdf

ա) կոռուպցիայի դեմ իրական պայքարն ու տնտեսական ինքնիշխանության վերականգնումը, բ) հարկային անհրաժեշտ բարեփոխումների իրականացումը, գ) բյուջեի մուտքերի կայուն աճը, դ) պետական պարտքի սպասարկումից՝ ինտենսիվ կառավարման անցումը, հատուկ կառուցակարգով արտաքին պետական պարտքի առկա ճնշող բեռի կրճատումը:

Հարկային համակարգի էկոլոգացման գործնական կիրառումը պահանջում է ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխանաբար երկու նոր՝ «Էլեկտրաէներգիայի ակցիզային հարկը» և «Բնական գազի ակցիզային հարկը» բաժինների ներմուծում:

Ստորև համեմատական գնահատման կարգով ներկայացված են երկու ձևաչափերով ՀՀ-ում սպառողների համար բնական գազի և էլեկտրաէներգիայի գնի նվազեցման արդյունքներն ու հետևանքները:

Առաջինը սպառողների համար արդեն իսկ կիրառվող լուծումն է՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի տարբերակված կամ արտոնյալ և ոչ արտոնյալ սակագների կիրառումը, որն ընդունվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2016 թ. նոյեմբերին և դեկտեմբերին: Այս տարբերակը խիստ խոցելի է և հանգեցրել է ՀՀ տնտեսական ինքնիշխանության կորստին: Բացի այդ, այն անմրցունակ է հետևյալ հիմնավորումներով:

1. Կիրառվում է գազ և էներգակիրներ ունեցող զարգացող երկրներում և մեթոդական առումով հանգում է բնաիրային սուբսիդավորման ձևաչափին: Հայտնի է, որ Հայաստանը էներգակիրներ ներկրող է, և նրա էներգետիկ ռազմավարության հիմքում տնտեսական տարբեր խթանող կառուցակարգերով այդ էներգակիրների ներմուծման այլընտրանքների դերի մեծացումն է:

2. Մոտեցումը մերժելի է «հարկային ծախսերի» կառուցակարգի տեսանկյունից: Հարկը զիջվում է արտոնյալ սակագներով ծառայություն մատուցելու դիմաց, որը քանակապես՝ ֆիսկալ, տնտեսական և սոցիալական արդյունքների առումով որևէ կերպ գնահատված չէ:

3. Կառավարությունը սուբսիդավորման կարևոր գործառույթը միջնորդված՝ տարբերակված սակագների ձևաչափով պատվիրակել է օտարերկրյա առևտրային՝ բնական մենաշնորհների ոլորտում գործող կազմակերպություններին՝ «Գազպրոմ Արմենիա»-ին և «ՀԷՑ»-ին: Կառավարության լիազորությունների պատվիրակումը մասնավոր կառույցներին միջազգային պրակտիկայում ընդունված ձևաչափ է (հատկապես հակակոռուպցիոն լուծումների առումով), սակայն այս դեպքում միաժամանակ առկա են մի քանի ռիսկեր՝ կապված՝ ա) պետության ֆինանսական վերաբաշխման անմիջական գործառույթի, բ) բնական մենաշնորհ ոլորտների, գ) ներգրավված սուբյեկտների անմիջական տնտեսական շահը պատվիրակող գործառույթի, գ) դրա վարչարարության ակնհայտ բարդացման հետ: Ըստ այդմ՝ կառավարությունը

անհիմն ձևով կամավոր զիջել է իր ֆինանսական սուվերենությունը օտարերկրյա ընկերություններին: Դա կարող է խիստ բացասական ազդակ դառնալ ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների համար: Պատկերացնենք օտարերկրյա ներդրողների դիրքորոշումը, երբ նրանք բացահայտեն, որ ՀՀ վերամշակող ոլորտում գազի և էլեկտրաէներգիայի նվազ սակագները կիրառվում են ռուսական «Գազպրոմ Արմենիա»-ի և «ՀԷՑ»-ի կողմից, նրանց նախաձեռնությամբ կարող է ՀԾԿՀ-ն փոփոխել այդ սակագները, և, բացի այդ, նրանք կարող են իսպառ հրաժարվել արտոնյալ սակագներ տրամադրելուց: Կարծում ենք՝ մեկնաբանություններն ավելորդ են:

4. Այն մերժելի է նաև կիրառվող բնաիրային սուբսիդավորման ձևաչափի առումով, որի այլընտրանքը «համախմբված (կոնսոլիդացված) սուբսիդավորումն» է: Անապահով ընտանիքներին և թիրախային տնտեսավարողներին հատկացվող բնաիրային սուբսիդավորող տրանսֆերը դրա հասցեատիրոջը (բացի գազի և էլեկտրաէներգիայի սպառումից) զրկում է դա այլ ուղղությամբ ծախսելու հնարավորությունից կամ սուբսիդավորման այն ձևաչափից, երբ ստացողի համար առկա է ծախսերի վերաբաշխման հնարավորություն:

5. Տնտեսավարողներին նման ձևով սուբսիդավորումը կառավարությանը զրկում է մրցութային սուբսիդավորում իրականացնելուց, որը հատկապես նպատակահարմար է ՓՄՁ-ի սուբսիդավորման դեպքում:

6. Կառավարության կողմից սուբսիդավորման ոլորտների առաջնահերթությունների և դրանց չափերի փոփոխության որոշման դեպքում նա պետք է խնդրանքով դիմի «Գազպրոմ Արմենիա»-ին, որն էլ իր հերթին պետք է դիմի ՀԾԿՀ-ին, որպեսզի սահմանվեն տարբերակված նոր սակագներ: Դրա նպատակահարմարությունը, մեղմ ասած, խելամիտ հիմնավորում չունի:

7. Կառավարությունը, բացի սուբսիդավորման գործառույթ պատվիրակելուց, առևտրային կազմակերպություններին ինչ-որ չափով պատվիրակում է նաև սուբսիդավորվող կազմակերպությունների վերահսկողության կամ մոնիթորինգի գործառույթ, որն ընդունելի չէ, քանի որ վերջիններս անմիջական շահ ունեն վերահսկողության բուն խնդրում և հարաբերություններում:

8. Մոտեցման վարչարարությունը ի սկզբանե օբյեկտիվորեն խճճված ու բարդ է՝ ելնելով տարբեր կողմերի՝ պետության, բաշխիչ ցանցերի, «Գազպրոմ Արմենիա»-ի, «ՀԷՑ»-ի և գազ ու էլեկտրաէներգիա սպառողների տարբեր վեկտորների վրա գտնվող շահերից: Խնդիրը հանգում է «Գազպրոմ Արմենիա»-ի և «ՀԷՑ»-ի արտոնություններից օգտվող և դրանցից չօգտվող սպառողների ծախսած գազի և էլեկտրաէներգիայի քանակի «գեպը» կամ ճեղքվածքը մեծացնելուն, որի հետևանքով արտոնություններից չօգտվող սպառողները ստիպված վճարում են ավելի շատ:

9. «Գազպրոմ Արմենիա»-ն և «ՀԷՑ»-ը՝ որպես բիզնես ընկերություններ, շահույթը մեծացնելու նպատակով շահագրգռված են այս պահին և հետագայում կիրառել սակագնային զեղչերի համակարգ՝ պայմանավորված գազի ու էլեկտրաէներգիայի սպառման ծավալներով: Մինչդեռ նշված առևտրային ընկերությունները շահագրգռված չեն տարբերակված սակագին կիրառելու անապահով անձանց, ջերմոցային տնտեսությունների, վերամշակող կազմակերպությունների համար: Դա պետության նպատակային քաղաքականության խնդիրներից է:

10. «Գազպրոմ Արմենիա» ընկերության կողմից ցածր սակագների կիրառության ռեզերվներից մեկը պետության գործառույթների մեջ է, այն է՝ Վրաստանի տարածքով բնական գազի տարանցման գնի նվազեցումը: Մյուսը՝ ընկերության ֆինանսական ծախսերի օպտիմալացումը և ներդրումային ծրագրերի վերանայումը, բացի ընկերության կառավարման խնդիրը լինելուց, միևնույն ժամանակ և առավելապես ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի խնդիրն է: Հաջորդը ընկերության բաժնետեր ռուսական «Գազպրոմ»-ի կողմից ՀՀ-ին բնական գազի սպառման շուկայի կայունացման և աճի միտումների խթանման նպատակով ֆինանսավորումն է՝ հիմնադրի՝ այս պահի բիզնես կամքի դրսևորումը: Այն վաղը կարող է 180 աստիճանով շրջվել. պատճառը էական չէ, և ոչ ոք ռուսական «Գազպրոմ Արմենիա» կամ «ՀԷՑ» ընկերություններին չի կարող մեղադրել ինչ-որ խախտումներում, քանի որ դա առևտրային ընկերությունների բիզնես որոշման արդյունք է և ոչ թե պայմանագրային պարտավորության խախտում:

11. Ընդդիմախոսների մյուս հիմնական փաստարկն այն է, որ ԵԱՏՄ-ում և ԵՄ-ում գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկումը կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր անդամ երկրները կիրառում են դա: Հարկային քաղաքականությունն ու հարկերի հավաքագրումը ԵՄ և ԵԱՏՄ անդամ պետությունների ինքնիշխանության առանցքային հարցն է. այս ոլորտում անդամ երկրները միայն սահմանափակ լիազորություններ են պատվիրակում միություններին: Ի տարբերություն մաքսային ոլորտի՝ հարկային ոլորտին վերաբերող փաստաթղթերը խորհրդատվական, շրջանակային և հայեցողական են: Էներգակիրների հարկերի կիրառման հայեցակարգերը, մոտեցումները, կառուցակարգերը և հատկապես դրույքաչափերը ԵՄ-ի երկրներում խիստ տարբեր են:

Վերը նշված փաստարկները վկայում են՝ բնական գազ և էլեկտրաէներգիա սպառողների համար տարբերակված՝ արտոնյալ և ոչ արտոնյալ սակագների կիրառումը խոցելի է և անմրցունակ, քանի որ հիմնավորված չէ քանակական գնահատումներով, առաջացնում է բազմաթիվ բարդ և լուծում չունեցող հարցադրումներ, բաց են մնում երկարաժամկետ խնդիրները: Ըստ այդմ՝ ստորև ներկայացվում են նախընտրելի տարբերակի՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ներմուծման հիմնավորումները:

1. Մոտեցումը կառուցված է տեսամեթոդական հիմնավոր և անժխտելի հիմքի վրա (Double Dividend), որը տասնամյակներ շարունակ կիրառվում է միջազգային պրակտիկայում՝ Եվրամիության բոլոր և ՏՀԶԿ բազմաթիվ երկրներում:

2. Այն արդյունավետ է հատկապես այն երկրներում, որոնք չունեն էներգակիրների՝ նավթի, գազի պաշարներ, ընդ որում՝ դա կախված չէ երկրի զարգացման մակարդակից:

3. Զգալի չափով՝ մի քանի տոկոսային կետով, բարձրացնում է հարկային եկամուտներ-ՀՆԱ հարաբերակցությունը, որը երկրի հարկաբյուջետային կառավարման գնահատման առավել կարևոր ցուցիչներից է:

4. Բոլոր վճարողների համար «զրոյական միասնական սակագինը» (սակագին գումարած հարկ) մնում է նույնը, հավաքագրման վարչարարությունը պարզ է և նվազ ծախսատար: Ընդդիմախոսները չեն ցանկանում նկատել դա. սակագին գումարած հարկ մեծությունը չի գերազանցում մինչ այդ գործող սակագինը, որի լուծման եղանակը արդեն իսկ տրվել է նախորդ կառավարության կողմից:

5. Պետությունը ստանում է լրացուցիչ զգալի հարկային եկամուտներ: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կաճեն տարեկան 30-50 մլրդ դրամով և ավելի: Նշված մեծ միջակայքը պայմանավորված է նրանով, որ մինչ այդ անհրաժեշտ է որոշել առաջարկվող ակցիզային հարկի կիրառման մոտեցումները, չափորոշիչները և կոնկրետ կառուցակարգերը, ինչի դեպքում կարելի է ստանալ նաև սպասվելիք հարկային մուտքերի մեծությունը:

6. Ի հաշիվ լրացուցիչ հարկային եկամուտների՝ լուծվում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ խնդիրներ, մասնավորապես.

ա) Նպատակային սուբսիդավորում են ստանում անապահով անձինք և թիրախային տնտեսավարողները: Այն, ինչ նախատեսվում է իրականացնել բարդ տարբերակված սակագների միջոցով:

բ) Լրացուցիչ հարկային եկամուտների հաշվին հնարավոր է մասնավորապես մաքսային սահմանի վրա ԱԱՀ գանձման կրճատումը և/կամ դրա վերացումը և/կամ եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափի փոխարինումը համաչափ դրույքաչափով և/կամ ԱԱՀ դրույքաչափի նվազեցումը և/կամ այլ առաջնահերթությունների լուծումը:

գ) Հնարավոր կլինի անդրադառնալ պետական արտաքին պարտքի կրճատման արմատական լուծմանը՝ «պարտք բնապահպանության դիմաց» (Debt-for-Environment Swaps (DFES)) ալգորիթմով:

7. Ակցիզային հարկի ազդեցության գնահատումը դրական է՝ 1) հարկային մուտքերի, 2) վերջնական սպառման ապրանքների գների վրա ազդեցության, 3) հարկ վճարողների գործունեության և տնտեսության ռեսուրսատարության ու ծախսատարության ազդեցության առումով, կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:

8. ՀՀ հարկային օրենսգրքի հիմքում կդրվի արմատապես նոր փիլիսոփայություն կամ տնտեսական քաղաքականության խթանման բովանդակային բաղադրիչ, որը կապահովի հարկային եկամուտների էական աճ և դրանց դյուրին հավաքագրում, ավանդական հարկերի հարկային բեռի նվազեցում, հարկային համակարգի ընդհանուր չեզոքության պահպանում և ըստ այդմ՝ հարկային բեռի հավասարաչափ ճնշման ապահովում:

9. Լուծվում է ֆիսկալ եկամուտների էական աճի խնդիրը, միաժամանակ ապահովվում է էկոլոգիական խմբի հարկերի չեզոքությունը և բոլոր հարկերի հավասարակշռությունը:

10. Բիզնեսը ապահովում է՝ ա) նորարարությունների հանդեպ ընկալունակ նախաձեռնողական խթաններ, բ) երկարաժամկետ գործունեության իրատեսական մղումներ, գ) մրցունակության հավասար հնարավորություններ:

11. Առաջարկվող լուծումը հնարավորինս հաշվի է առնում բոլոր կողմերի շահերը և առաջացնում ցանկալի սիներգիկ կամ բազմապատիկ արդյունք:

12. Բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ձևաչափի ներդրումը նախընտրելի է և մրցունակ, քանի որ լուծում է առաջադրված խնդիրը, նպատակամղվում է կառավարության և տնտեսության համար կարևորագույն միջնաժամկետ և երկարաժամկետ խնդիրների լուծմանը:

13. Էկոլոգիական հարկերից (էներգակիրների խմբի, քանի որ այստեղ չի դիտարկվում բնական ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման համար կիրառվող պարտադիր վճարներն ու հարկերը) ստացվող եկամուտները իրենց բնույթով հաստատուն են, ենթակա չեն տատանումների՝ ի տարբերություն սովորական հարկային եկամուտների: Դա պայմանավորված է նրանով, որ գազի և էլեկտրաէներգիայի ակցիզի հարկային եկամուտները հիմնված են սպառման վրա, այսինքն՝ «ցնդող չեն»՝ ի տարբերություն այլ եկամուտների (կամ ՀՆԱ-ի աճի): Այսպիսով, էկոլոգիական հարկերից գեներացվող հարկային եկամուտները նվազ հեղհեղուկ են և ունեն ցածր շեղումներ՝ ի տարբերություն սովորական եկամուտների ու շահույթի հարկման:

14. Ի վերջո, առաջարկվող հարկումը կնպաստի ՀՀ վճարային հաշվեկշռի բարելավմանը՝ ի հաշիվ՝

- ամբողջությամբ ներկրվող գազի հարկման, որը կմեղմի ճնշումը ՀՀ կենտրոնական բանկի արտարժութային պահուստների վրա,
- կխթանի արտահանող ոչ էներգետիկ ընկերությունների մրցունակության բարձրացումը և հետևապես՝ նրանց արտահանման ծավալների աճը:

Ամփոփելով նշենք, որ առաջարկվող լուծումը ստեղծում է եզակի ու աննախադեպ հնարավորություն, այն է՝ արմատապես փոխել հար-

կային համակարգի ամբողջական դոկտրինը, որը հարկային և ավելի լայն՝ տնտեսական քաղաքականության մեջ առաջ կբերի բոլորովին նոր որակ և լուծումներ: Մասնավորապես՝ բիզնեսի համար կապահովի մրցունակության հավասար հնարավորություններ, նորարարությունների հանդեպ ընկալունակ նախաձեռնողական խթաններ, երկարաժամկետ գործունեության իրատեսական մղումներ: Առաջարկվող մոտեցումը հնարավորություն կտա էապես բարձրացնելու ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները. քանակապես այն գնահատվում է տարեկան 30-50 մլրդ դրամ՝ կախված ներդրվող համակարգի մոտեցումներից, չափորոշիչներից, կառուցակարգերից և այլ գործոններից:

***Բանալի բառեր –*** *տնտեսական ինքնիշխանություն, կոռուպցիա, հովանավորչություն, մենաշնորհներ, էկոլոգիական հարկեր, էլեկտրաէներգիայի և բնական գազի ակցիզային հարկ, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառողների համար տարբերակված սակագներ*

**АРА КАРЯН –** ***Проблема восстановления экономического суверенитета в РА.*** **–** В статье отмечено, что для восстановления экономического суверенитета стране необходимо вести решительную борьбы с коррупцией, покровительством, монополиями. Необоснованно передавать функции субсидирования операторам естественных монополий – природного газа и электроэнергии. Содержательный формат решения основан на введении акцизного налога на эти энергоносители. Подчёркнута несостоятельность аргумента о непременном повышении цен – эта мера не позволит обеспечить реальную борьбу с коррупцией, осуществить необходимые налоговые реформы, обеспечить устойчивый рост доходов бюджета и сократить бремя внешнего государственного долга.

**Ключевые слова:** *экономический суверенитет, коррупция, покровительство, монополии, экологические налоги, акцизный налог на электроэнергию и природный газ, дифференцированные тарифы природного газа и электроэнергии для потребителей*

**ARA KARYAN –** ***The Issue of the Recovery of the Economic Sovereignty in RA.*** **–** The article discloses the problem of restoring economic sovereignty in Armenia. The article notes the need and steps to combat corruption, patronage, and monopolies. The basis of economic sovereignty on the unreasonable transfer of the function of subsidizing beneficiaries of natural gas and electricity to the operators of natural monopolies in these areas is indicated. The format of the solution is based on the introduction of an excise tax on energy carriers – natural gas and electricity. It underlines the failure of the price increase argument and that the proposed solution will ensure a real fight against corruption and restore economic sovereignty, will implement the necessary tax reforms, will ensure a steady growth in budget revenues, and reduce the overwhelming burden of external public debt.

**Key words:** *economic sovereignty, corruption, patronage, monopolies, environmental taxes, excise tax on electricity and natural gas, differentiated tariffs for natural gas and electricity for consumers*

Ներկայացվել է՝ 10.05.2019
Գրախոսվել է՝ 30.05.2019
Ընդունվել է տպագրության՝ 22.07.2019